

# ՀՀ Վայոց ձորի մարզպետ Արագած Սաղաթեյանի ուղերձը Երեխաների իրավունքների պաշտպանության միջազգային օրվա առթիվ

01.06.2018



Միբելի երեխաներ:

Հարգելի ծնողներ, տատիկներ և պապիկներ:

Ջերմորեն շնորհավորում եմ մոլորակի ամենապայծառ տոներից մեկի՝ Երեխաների իրավունքների պաշտպանության միջազգային օրվա կապակցությամբ:

Հունիսի 1-ը ևս մեկ առիթ է դրսևորելու երեխաների հանդեպ մեր անսահման սերն ու ջերմությունը, ի ցույց դնելու մեր անմնացորդ նվիրվածությունն ու հոգածությունը մեր հասարակության վաղվա օրը կերտողների հանդեպ:

Հարգելի ծնողներ, Ձեր ուսերին է դրված երեխաներին ընտանեկան ջերմությամբ պարուրելու, առողջ սերունդ դաստիարակելու և ընտանիքի արժանի հերթափոխ ապահովելու դժվարին պատասխանատվությունը: Ուստի մաղթում եմ Ձեր ընտանիքներին սեր ու բարեկեցություն: Թող տա Աստված, որ ձեր ընտանիքներում բազմիցս հնչեն նորածին երեխաների առաջին ճիչերը:

Իհարկե, կրթված ու զարգացած սերունդ դաստիարակելը ինչպես յուրաքանչյուր ծնողի ու ընտանիքի, այնպես էլ պետության ու մեր հասարակության խնդիրն է:

Մարզային իշխանությունների մշտական ուշադրության կենտրոնում եղել և մնում են երեխաների առողջության պահպանման, սոցիալական ապահովվածության, կրթության ու դաստիարակության խնդիրները, նպատակ ունենալով, նպաստել՝ առողջ ու երջանիկ ապրելու և որպես բազմակողմանի զարգացած մարդ կայանալու երեխաների իրավունքի իրացմանը:

Միբելի երեխաներ, մեկ անգամ ևս շնորհավորում եմ ձեզ աշխարհում ամենալուսավոր այս տոնի առթիվ և մաղթում եմ, որպեսզի ողջ կյանքում պարուրված լինեք ընտանեկան ջերմությամբ, արժանանաք ձեր ծնողների սիրառատ հոգածությանն ու շրջապատի բարի կամեցողությանը և ապրեք կապույտ երկնի ներքո, վայելեք արևոտ ու գունեղ մանկություն, անհոգ ու երջանիկ օրեր:

Միբելիներս, դուք եք մեր օջախների լույսը, մեր վաղվա օրը ու մեր երկրի հուսալի ապագան: Թող իրականանան ձեր բոլոր ցանկություններն ու նվիրական երազանքները: